№ 71 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 25 1888 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 25 № 71

ՏԱՍՆ ԵՒ Վ.ԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՆԵՐԿԱՅ 1888 ԹՒԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 բուբլի է, վեց ամսվանը 6 բուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնակայա և Բազարնայա փողոցների անկիւն նում Թամամշեվի տանը)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tifiis, Rédaction du journal arménien «MSHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան ճիւղը Երևանում. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռուսաց ծանուցագիրը պատերազմական տուգանքների մասին. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ժամանակակից հայոց լեզուի մշակութիւնը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՃԻՒՂԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

—

Ամեն մի քաղաքում, որտեղ չը կան ապահոված դպրոցներ, մեծ կարիք է զգացվում մի օգնող ոյժի, բարեգործ ձեռքերի, որպիսիները մեծ մասամբ կարող են դոյութիւն ունենալ ընկերութիւնների կազմակերպութեան մէջ։

Երևանը ևս պատկանելով այդպիսի քաղաքների թվին, որտեղ աչքի են ընկնում՝ չքաւոր դասակարգը, աղքատ աշակերտների մի ստուար բազմութիւն, անապահով դպրոցները, որտեղ չը կայ ոչ մի հիւանդանոց, աղքատանոց, անկելանոց, որտեղ մուրացկանները, բառի բուն նշանակութեամբ՝ մարդու «դահլա» են տանում, վաղուց արդէն զգացվում էր մի բարեգործական ընկերութեան անհրաժեշտութիւնը։ Հանգամանքները տխուր բարդվելով, այստեղ 1882 թվին դոյութիւն ունեցող Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան ճիւղը փակվեց մինչև այսօր, և նոյն իսկ այդ տխուր տպաւորութեան տակ, ոչ մի աշխատութիւն գործ չէր դրվում այդ ճիւղը վերականգնելու։ Բայց մի կողմից պահանջը, միւս կողմից Երևանին պատիւ չը բերող անտարբերութիւնը, ստիպեցին մի քանի երիտասարդների մի խնդրագիր պատրաստել, որին ստորագրված էին 52 անձինք, և տեղիս ս. առաջնորդի միջոցով թոյլատրութիւն խնդրել Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդից կրկին հիմնել Երևանում այդ ընկերութեան ճիւղը, որ և անմիջապէս ստացվեց։

Առաջին անգամ ժողով հրաւիրվեց ամսիս 5-ին. բայց 52 անձինքներից միմիայն 15 հոգի ներկայացան, որոնք աչքի առաջ ունենալով, թէ անդամների թվի քչութիւնը, թէ այն միտքը, որ գուցէ շատերը կը ցանկանան անդամ լինել, բայց այդպիսիները զրկված կը լինեն ընտրութեան ձայնից և թէ ցանկանալով որ աւելի բարձր դիրք ունեցող անձինք մասնակցեն, որոնք կարողանան ընկերութեան ծաւալը մեծացնել,—ժողովը վճռեց ընտրութիւնները յետաձգել միւս կիրակի, ամսիս 12-ին, հրաւիրել խնդրագիրը ստորագրող մի և նոյն 52 անձանց, և մի առանձին ցուցակով հրաւիրել և ուրիշ պատաւոր անձանց, որոնց թիւը 100-ի հասներ. բայց այնուամենայնիւ սպասած թվին չը հասաւ։ Անդամների թիւը 33 էր, որոնցից ներկայ էին 27 հոգի, որոնք իսկոյն ձեռնարկեցին ընտրութեանը։ Նախագահ ընդհանուր ժողովի ընտրվեց տեղիս ս. առաջնորդը, և քարտուղար՝ պ. Մինաս Պանճուլաղեան. մասնաժողովի անդամներ՝ Յ. Յ. Էմին Տէր-Գրիգորեան, Կոստանդին Խազբաշեան, բժիշկ Ալէքսանդր Սիմէոնեան, Կարապետ Դաղամեան, Սամսոն Տէր-Սահակեան. փոխ-անդամներ՝ Սիրական Տէր-Մարտիրոսեան, Թորոս Տէր-Ղազարեանց, և Յովհաննէս Յովհաննիսեան, որից յետոյ ուրախ տրամադրութեան տակ ժողովը ցրվեցաւ, սպասելով ապագայ աջողութեանը։

Այժմեանից ի հարկէ դժուար է մի որոշ բան ասել այդ ընկերութեան մասին, բայց աչքի առաջ ունենալով վարչութեան անդամների աջող ընտրութիւնը, կարելի է յուսալ, որ ընկերութիւնը կարող է աջողութիւն ունենալ, մանաւանդ այն պատճառով, որ շատերը չը կարողացան անդամ գրվել ժամանակի անյարմարութեան պատճառով (ամարանոց գնալը), որ ձմեռները, ինչպէս մտադրութիւն կայ, թատրօնական ներկայացումներ կը լինեն յօգուտ այդ ընկերութեան և որ գլխաւորն է 1882 թվի այստեղի ճիւղի փողերը յանձնված է պահանջել ներկայ ճիւղի օգտին և առ այժմ երկու անձինք, որոնց մօտ կայ մօտ 300 բուբլի՝ պատրաստականութիւն են յայտնել վճարելու, և որովհետև այն ժամանակից այդ 5—600 բուբլի փող պէտք է լինի, որը առայժմ անյայտ է թէ ում մօտ է, յոյս կայ այն ևս ստանալու։

Մտադրութիւն կայ այդ ընկերութեանը մասնակցելու հրաւիրել տեղիս կանանցից ևս անձինք, որը դարձեալ բաւական աջողութիւն է խոստանում գործին և չենք կարծում, որ տիկինները այդ հրաւէրին չը համակրեն, որովհետև այստեղ կանանց Բարեգործական ընկերութիւնը կազմելու ժամանակ, որի մասին և գրած էի ձեզ, բաւական սիրով աշխատում էին։ Իսկ որովհետև, ինչպէս լսում ենք, այդ ընկերութիւնը չէ հաստատված, ի հարկէ առանձնապէս դոյութիւն չէ էլ կարող ունենալ։

Ուրախանալով թէ ընկերութեան դոյութեան և աջող ընտրութեան մասին, ցանկանում ենք ընկերութեանը երկարատև և առաջադէմ կեանք, իսկ վարչութեանը բարեխիղճ և տոկուն գործունէութիւն։

Այս բոլորից յետոյ չէ կարելի չը նախատել և մեղադրել Երևանի այն ինտելիգենտ և զարգացած դասակարգին, որը պուճախներում գիտեն աւելի շատ գոռգոռալ, աւելի շատ խօսել և դատել, քան այդպիսի բարեգործութիւններին մասնակից լինել և որոնցից շատերը գուցէ այդպիսի ընկերութիւնների շնորհով նպաստ, կրթութիւն և ուսում են ստացել, այն վաճառականներին, որոնք քէֆի, հարբեցողութեան, նարդիի և ուրիշ չռայլ ծախսերին տասնեակ այնպիսի 5 բուբլիներ են մսխում, բայց այդպիսի գործում զլանում են ամբողջ տարվայ համար միմիայն 5 ր. տալ, և վերջապէս այն բարձր կրթութիւն ստացած հազարներով ռոճիկ ստացողներին, որոնք դեռ ուսանող ժամանակ ահագին յոյսեր էին տածում, ահագին խոստումներ էին անում, իսկ այսօր բացի թղթախաղից, փորից և փողից, ամեն բան և հետևաբար այդպիսի ընկերութիւնները՝ երեխայութիւն և յիմարութիւն են համարում։

Ս. Ֆ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ 71-րդ համարը, մեզանից անկախ պատճառներով չը կարողացանք հրատարակել հինգշաբթի, յունիսի 23-ին, այլ հրատարակում ենք այսօր, յունիսի 25-ին։

—

«Հիւսիսային գործակալութիւնը» մայրաքաղաքի լրագիրներին հեռագրում է Կ. Պոլսից, որ Սուլթանը հրատարակել է իրադէ, որով ընդունվում է հայոց պատրիարք Ցարութիւն Վ.եհապետեանի հրաժարականը։

—

Մեզ խնդրում են տպել հետևեալ յայտարարութիւնը։ «Պետրովսկ քաղաքի հայոց եկեղեցականծխական միդասեան դպրոցի հոգաբարձութիւնը հրաւիրում է առ մէկն օգոստոսի ներկայ թվի, մի ուսուցիչ հայոց և ռուսաց լեզուների համար, տարեկան 300 բուբլի ռոճիկով։ Դպրոցին կից ուսուցիչը կունենայ մի սենեակ։ Ցանկացողները պիտի ուսուցչութեամբ պարապելու իրաւունք տուող վկայական ունենան։ Ցանկացողները կարող են չուտով դիմել հոգաբարձութեան անդամ Սարումեանցին հետևեալ հասցէով. Въ г. Петровскъ (Дагест. Обл.) Даніилу Андреевичу Сарумову.»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Մեզանում կարկուտը, անձրևները ու հեղեղները քիչ վնասներ չը պատճառեցին։ Կարկուտը և հեղեղները երկու

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

—

Այն մարդիկ, որոնք բացի բնականապէս միջակ ընդունակութիւնների տէր մարդիկ լինելուց չեն ստացել հիմնաւոր սկզբնական ուսում, հիմնաւոր և բազմակողմանի ընտանեկան կրթութիւն, որոնք ընդհանուր ինքնուրոյն կրթութիւն չեն ստացել, չեն էլ լրացրել իրանց մտաւոր զարգացումը ինքնակրթութեամբ, որոնք մտաւոր ընդհանուր հմտութիւններ չունեն, բաւականացուցիչ մտաւոր ուսումնական պաշար և լեզուագիտութիւն չունեն,—այդ տեսակ մարդիկ, ինչքան էլ միջնակարգ և բարձրագոյն ուսում ստացած լինեն՝ միշտ մնում են անընդունակ ինքնուրոյն կերպով մտածելու, անընդունակ իրանց ուղեղով անկախ կերպով այս կամ այն միտքը արդիւնաբերելու։ Նրանց մտաւոր կարողութիւնը միշտ մնում է յայտնի շրջանակների մէջ սեղմված, նրանց ուղեղը անկախ կերպով չէ գործում։ Այդ տեսակները, ինչքան էլ իրանց հասարակաց դիրքի շնորհով ինտելիգենցիային պատկանէին, նրանք երբէք ընդունակ չեն լինում ինքնուրոյն կերպով մտածելու, այլ միշտ կրկնում են անգիտակցաբար՝ արդէն առաջուց հասարակութեան մէջ շրջող գաղափարները, փոխ են առնում, առանց իրանց հաշիւ տալու, թռչակի պէս, անգիր արած ուրիշների մտքերը։

Այդ տեսակ անգիր արած, անգիտակցաբար, չը հասկացած և նշանակութիւնը չը կշռած մտքերի շարքին պատկանում են այն մտքերը, որ մեր ինտելիգենցիա անուանված ամեն ինքնուրոյն մտաւոր զարգացումից զուրկ, և իր սեփական ուղեղով մտածելու անսովոր դասակարգը, տեղի թէ անտեղի կրկնում է, երբ իսկ է ընկնում նոր, ժամանակակից աշխարհաբար լեզուի զարգացման և մշակութեան վրա։

Այդ անգիր արած մտքերը գլխաւորապէս հետևեալ երեք մտքերն են.

1) Աշխարհաբար լեզուն ծագում է անմիջապէս դրաբարից, ուստի առաջինը իր զարգացման ու մշակութեան մէջ պէտք է օգտվի միմիայն դրաբարից։

2) Պարբերական մամուլի լեզուն, քանի որ մամուլի յօդուածները չափից դուրս շտապով են գրվում, անկարող է մշակել արդեան, աշխարհաբար լեզուն, այլ ընդհակառակն, աղաւաղում է այդ լեզուն։

3) Ժամանակակից հայոց աշխարհաբար լեզուի մէջ չը պէտք է մտցնել օտար բառեր։

Այդ երեք թէզիսները ջոկ ջոկ կը քննենք և կաշխատենք ցոյց տալ նրանց հիմնովին սխալ լինելը։

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ ԾԱԳՈՒՄԸ

Ամեն լեզուի աղբիւրը ժողովուրդն է։

Որ և է լեզուի ծագումը հասկանալու համար բաւական չէ լեզուագէտ կամ պատմաբան լինել, հարկաւոր է բնագիտական օրէնքների վրա էլ հասկացողութիւն ունենալ։ Ազգագրական (էթնոգրաֆիական) և լեզուագիտական երևոյթներն ըմբռնելու համար պէտք է նրանց զարգացման քննութիւնը ենթարկել բնագիտական մեթոդին։

Ինչպէս կենդանական և բուսական աշխարհի անսպառելի աղբիւրը հողն է, այնպէս էլ մարդկային լեզուի գոյութեան անսպառելի աղբիւրը երկիրը (հայրենիքը) և նրա սահմաններում բնակվող ժողովուրդն է։

Ժողովուրդը խօսում է իր մայրենի լեզուով, մեծ մասամբ բաղմաթիւ այլ և այլ գաւառական բարբառներով։ Երբ նոյն ժողովրդի մի յայտնի մասի մէջ, որը իր մտաւոր կեանքով աւելի բարձր է լինում ռամիկ ամբոխից, ծնվում է պահանջ դրի առնել գաղափարները, ձև տալ, ձևակերպել, գրական կերպարանք տալ իր հոգևոր ու մտաւոր իդէալներին, երբ այդ ժողովրդի մասի մտաւոր հորիզոնը հետզհետէ լայնանում, ընդարձակվում է, հոգևոր կեանքի պահանջները հետզհետէ բազմանում, բարդվում են,—այն ժամանակ ժողովրդի այդ ընտրեալները, օգտվելով ժողովրդական բարբառներից, կամ ժողովրդական բարբառների մէկից, որը միւսներից աւելի գեղեցիկ, զօրեղ, կատարեալ է լինում, սկսում են զարգացնել նրան գրական լեզուի, նրանով արտայայտելով իրանց գաղափարները գրականութեան մէջ։

Այդպիսով հին լատինական լեզուն ծագել է հին իտալական ժողովրդական բարբառների մէկից, հին կլասիական յունական լեզուն գրեթէ անտես առնելով միւս յունական ժողովրդական բարբառները, մշակվել է Աթէնքի ժողովրդական ամենագեղեցիկ բարբառից։

Հին գրաբար հայոց լեզուն էլ, որը կրում էր «արքունի լեզու» անունը, հաւանօրէն մշակվել է օգտվելով հայոց գաւառական լեզուների մէկից, որը գաւառական լեզուների շարքում ամենաբնաւորն էր։ Եւ յայտնի է, որ գրաբար լեզուի գոյութեան հետ զուգընթացաբար գոյութիւն ունէին և հայոց ռամկական բարբառները։ Ժամանակով, դարերի ընթացքում, գրական լեզուն հետզհետէ կատարելագործվելով և կատարելութեան գագաթնակէտին հասնելով, աւելի և աւելի ըսկսում է հեռանալ ժողովրդի ընդհանրութեան հասկացողութիւնից, սկսում է հետզհետէ ընդհանուր գործածութիւնից դուրս գալ, և մնում է միայն որպէս պատմական կլասիական լեզու, սակայն ժողովրդական բարբառները մնում են կենդանի և անխախտ։ Եւ ահա նոր կեանք, նոր գա-

անգամ վնասեցին Սուրմալուի բոլոր բամբակներին, այնպէս որ շատ տեղերում ստիպված էին՝ կամ երկրորդ անգամ բամբակ ցանել, կամ մի ուրիշ բոյս ցանել։ Փոստային յարաբերութիւնը մօտ 10 օր կտրված էր Թիֆլիսի հետ և ճանապարհորդները ստիպված էին շատ տեղերում ոտով անցնել։›

—

Մեզ հաղորդում են Երևանից, յունիսի 17-ից հետևեալը։ ‹Երեք օր առաջ երկու թուրք մտնում են այստեղի մի հայի տան արտաքնոցը, մաքրելու նպատակով. յանկարծ արտաքնոցը փլչում է և թուրքերը մնում են նրա աւերակների տակ ու խեղդվում են։›

—

‹Недѣля› շաբաթաթերթի խմբագրութիւնից, որպէս աւելուած հրատարակվող վէպերի ժողովածուի, մայիս և յունիս ամիսների գրքոյկների մէջ, լոյս տեսաւ Անտարովի մի հետաքրքիր բոման ‹Дѣвичьи сны› (Աղջկայ երազներ) վերնագրով։ Այդ բոմանի գործող անձինք մեծ մասամբ ռուսաց այժմեան հասարակութեան տիպերն են կազմում, թէև գործողութիւնը պատահում է արտասահմանում և ճանապարհորդները չփվում են ուրիշ ազգութիւններին պատկանող ներկայացուցիչների հետ։

—

Ինչպէս մեզ գրում են Երևանից, այդ քաղաքի հայոց թեմական դպրոցի հոգաբարձութիւնը մի լաւ կարգադրութիւն է արել այս տարի. այժմ ուսուցիչները այլ ևս չեն վարձվի առանձին առանձին պայմաններով և համաձայնութեամբ, այլ ամէն մի դաս կունենայ իր որոշ, նշանակած գինը և երբ ուսուցիչը կը վարձվի, նրան արդէն յայտնի կը լինի թէ ինչքան վարձ պէտք է ստանայ։ Թղթակիցն աւելացնում է որ զպրոցի վեցերորդ դասատնից այս տարի առաջին անգամ աւարտեցին 8 հոգի աշակերտներ։ Քննութիւնները բաւական աջող անցան։

—

Ինչպէս մեզ գրում են ԿՕՋՕՐԻՑ, Թիֆլիսի նահանգապետ պ. Զիսէրմանի հիւանդութիւնը, որը գնացել է այնտեղ լաւանալու համար, առհասարակ շատ ծանր կերպարանք ունի։

—

Մեզ գրում են ԿՕՋՕՐ ամարանոցից հետևեալը։ ‹Ամարանոց եկողների շատանալու հետ միասին այս կողմի գլխաւոր ճանապարհների վրա սկսեցին երևալ գողեր ևս։ Անցեալ օրերին Կօջօրի ճանապարհին ձերբակալվեցան երկու երիտասարդ թուրքեր, որոնք, ինչպէս երևաց մանրամասնութիւններից, ճանապարհի վրա մի քանի օր սպասելով, մտադիր են եղել կողոպտել անցնողներին. նրանք աւելի առաջ երևացել են Մանգլիս տանող ճանապարհի վրա, փորձել են կողոպտել կառքով անցնող մի քանի անձանց, բայց չէ աջողվել։ Ձերբակալված գողերը բանտարկված պէտք է լինեն, մինչև գործի քննութեան վերջանալը։›

—

Մեզ հաղորդում են Երևանից, յունիսի 17-ից հետևեալը։ ‹Երեք օր առաջ երկու թուրք մտնում են այստեղի մի հայի տան արտաքնոցը, մաքրելու նպատակով. յանկարծ արտաքնոցը փլչում է և թուրքերը մնում են նրա աւերակների տակ ու խեղդվում են։›

—

‹Недѣля› շաբաթաթերթի խմբագրութիւնից, որպէս աւելուած հրատարակվող վէպերի ժողովածուի, մայիս և յունիս ամիսների գրքոյկների մէջ, լոյս տեսաւ Անտարովի մի հետաքրքիր բոման ‹Дѣвичьи сны› (Աղջկայ երազներ) վերնագրով։ Այդ բոմանի գործող անձինք մեծ մասամբ ռուսաց այժմեան հասարակութեան տիպերն են կազմում, թէև գործողութիւնը պատահում է արտասահմանում և ճանապարհորդները չփվում են ուրիշ ազգութիւններին պատկանող ներկայացուցիչների հետ։

—

Ինչպէս մեզ գրում են Երևանից, այդ քաղաքի հայոց թեմական դպրոցի հոգաբարձութիւնը մի լաւ կարգադրութիւն է արել այս տարի. այժմ ուսուցիչները այլ ևս չեն վարձվի առանձին առանձին պայմաններով և համաձայնութեամբ, այլ ամէն մի դաս կունենայ իր որոշ, նշանակած գինը և երբ ուսուցիչը կը վարձվի, նրան արդէն յայտնի կը լինի թէ ինչքան վարձ պէտք է ստանայ։ Թղթակիցն աւելացնում է որ զպրոցի վեցերորդ դասատնից այս տարի առաջին անգամ աւարտեցին 8 հոգի աշակերտներ։ Քննութիւնները բաւական աջող անցան։

—

Ինչպէս մեզ գրում են ԿՕՋՕՐԻՑ, Թիֆլիսի նահանգապետ պ. Զիսէրմանի հիւանդութիւնը, որը գնացել է այնտեղ լաւանալու համար, առհասարակ շատ ծանր կերպարանք ունի։

—

Մեզ գրում են ԿՕՋՕՐ ամարանոցից հետևեալը։ ‹Ամարանոց եկողների շատանալու հետ միասին այս կողմի գլխաւոր ճանապարհների վրա սկսեցին երևալ գողեր ևս։ Անցեալ օրերին Կօջօրի ճանապարհին ձերբակալվեցան երկու երիտասարդ թուրքեր, որոնք, ինչպէս երևաց մանրամասնութիւններից, ճանապարհի վրա մի քանի օր սպասելով, մտադիր են եղել կողոպտել անցնողներին. նրանք աւելի առաջ երևացել են Մանգլիս տանող ճանապարհի վրա, փորձել են կողոպտել կառքով անցնող մի քանի անձանց, բայց չէ աջողվել։ Ձերբակալված գողերը բանտարկված պէտք է լինեն, մինչև գործի քննութեան վերջանալը։›

—

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ գրում են. «Սուրբ Ստեփաննոս եկեղեցու նախկին երեցփոխ Պօղոս Գանջումեանի փոխարէն ընտրվեց պ. Յովհաննէս Գանջումեան. վերոյիշեալ պարոնը տեղական երկսեռ դպրոցների հոդաբարձուն էլ է։ Քաղաքումս դրա վրա առհասարակ լաւ են խօսում, մանաւանդ իբրև դպրոցների հոդաբարձու։ Սա եղաւ սկզբնապատճառը քաղաքային դպրոցում այս տարվայ հայ լեզուի դասատուութեան։ Լիայոյս ենք, որ վերոյիշեալ պարոնը իր երեցփոխականական պաշտօնը խղճմտանքով կը կատարէ։›

—

Մի հայ երիտասարդ, Եղիշէ Մաղաթեան, որը այս տարի աւարտել է իր ուսումը Մօսկվայի համալսարանի լեզուագիտական-պատմական բաժնում, ուղարկել է մեզ հետևեալ նկատողութիւնը, տպագրելու համար։ ‹Մի երկու—երեք ամիս սրբանից առաջ Մօսկվայի պատմական մուզէումի մէջ որոնելով հայերիս վերաբերեալ գրուածներ, ես գտայ մի ֆրանսերէն երկասիրութիւն հետևեալ վերնագրով. «Estat présent de l'Arménie, tant pour le temporel que pour le spirituel, avec une déscription du pays et des moeurs de ceux qui l'habitent.» Գիրքը բաղկացած է 396 երեսից և տպված է Փարիզում ժակ Լանդուայի ձեռքով, 1694 թվին, ուրեմն հեղինակը մեր Զաքարիա Սարկաւագի ժամանակակիցն է եղել։ Որքան կարելի էր ծանօթանալ նրա բովանդակութեանը մի ժամվայ ընթացքում, կարող եմ ասել, որ դա մի նկարագիր է կաթոլիկ միսիոնէրների գործունէութեան Հայաստանում, կամ աւելի ճիշդ ասած՝ հայերի մէջ ընդհանրապէս։ Առաջաբանում հեղինակը խոստանում է ճշմարտախօս լինել և հաստատել իր վկայութիւնները միսիոնէրների նամակներով։ Այդ միսիոնէրներից նա յիշում է Samson անունով մէկին, որ մի քանի տարի մեծ եռանդով գործել է հայերի փրկութեան համար։ Յաւակցաբար լինած միայն մի անգամ աջողվեց տեսնել այդ վերին աստիճանի հետաքրքրական աշխատութիւնը, որովհետև մուզէումի գրքերի տեղափոխութեան պատճառով գրադարանը փակված մնաց մինչև իմ դուրս գալու օրերը Մօսկվայից։ Յանկալի կը լինէր, որ մայրաքաղաքում մշտական բնակութիւն ունեցող մեր ազգի բանասէրներից մէկը յանձն առնէր մանրամասն տեղեկութիւն տալ այդ հաղագիւտ գրքի բովանդակութեան մասին, որը, եթէ չենք սխալվում, դեռ ևս անյայտ է մեր պատմագէտներին։›

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. ‹Ամսիս 19—20, գիշերվայ ժամի երեքին, անձնասպանութիւն գործեց տեղիս վաճառական Ս. Մ.։ Անձնասպանը ոչ մի նամակ չէ թողել, և այդպիսով յայտնի չէ անձնասպանութեան պատճառը։ Շատերը կարծում են որ առևտրի անաջողութիւնից է։›

—

Մեզ գրում են ԳԱՆՁԱԿԻՑ. ‹Ամսիս 21-ին մի ջրաղացպան իր կնոջ վզին պարան էր գցել խեղդելու դիտաւորութեամբ. այդ միջոցին վրա են հասնում հարևանները և անխիղճ մարդու ճիրանից ազատում թշուառ ջահիլ կնոջը։ Կնոջ զրկութիւնը անյուսալի է։ Զարագործութեան պատճառը, ինչպէս պատմում են, այն է եղել, որ կինը չէ յօժարվել բաժին տանալ իր մեռած հօր կայքից։›

—

Վարչավայի համալսարանի վերջին լսարանի ուսանող Ս. Լիսիցեան խնդրում է մեզ յայտնել, որ նա պարապելով Լեհաստանի հայերի պատմութիւնով, խնդրում է այդ հարցի հետ ծանօթ պարոններից յայտնել իրան թէ ինչ ձեռագիր կամ տպած աղբիւրներ և հետազօտութիւններ (ամբողջ գրքեր թէ փոքրիկ յօդուածներ պարբերական թերթերի մէջ, եւրօպական թէ ասիական լեզուներով, թարգմանած թէ ինքնուրոյն) յայտնի են նրանց այդ հայ դաղթականների մասին։ Հասցէն. Тифлисъ, Сергіевская 20, իսկ սեպտեմբերից Варшава студенту университета С. Лисицянцъ.

—

Վրաց ‹Իվերիա› լրագիրը հաղորդում է, որ բարօն Սուտնէր, որը չորս տարի սրանից առաջ Թիֆլիսումն էր և այստեղի մամուլի մէջ Ռուստավելլի ‹Վագրի մորթի› առիթով քննադատութիւն տպեց, այժմ մի նոր վէպ է գրել գերմաներէն լեզուով վրաց կեանքից ‹Աշար› վերնագրով, որը մաս-մաս տպվում է Շտուտգարտում հրատարակվող ‹Գերմանական վէպերի գրադարան› ամսագրի մէջ։

—

Պետական խորհուրդը լուսաւորութեան մինիստրի առաջարկութեան համեմատ, վճռել է պետական գանձարանից այլ ևս օժանդակութիւն չը տալ գիմնազիաներին, նրանց մէջ պատրաստական դասարաններ ունենալու համար, բացառութիւն անելով միայն այն տեղերի համար, որտեղ տիրապետող լեզուն ռուսերէնը չէ։ Համաձայն այդ վճռի, ինչպէս մենք լսեցինք, Թիֆլիսի պրոգիմնազիայում արդէն յայտարարված է, որ աշակերտներ նորից ընդունվում են պատրաստական դասատան մէջ։ Պատրաստականների աշակերտների դրութեան մէջ միայն այժմս մի փոփոխութիւն է մտցնվում։ Առաջին դասատունը անցնելու համար հարկաւոր է ոչ թէ հասարակ քննութիւն տալ, այլ պէտք է մրցել և օտար աշակերտների հետ, որոնք կամենում են մտնել նոյն դասատունը։

—

ՇՈՒԼԱՎԷՐԻՑ մեզ գրում են, որ այնտեղ երեխաների մէջ սաստիկ կերպով տարածված են զանազան տարափոխիկ հիւանդութիւններ, մանաւանդ ‹կոկլիուշ› անուանված ցաւը։ Օր չէ անցնում, որ 5—6 երեխայ չը թաղեն։ Կարճ ժամանակում մեռած երեխաների թիւը հասել է մինչև 200-ի։ Մինչև այժմս ոչ մի արմատական միջոցի դեռ չեն դիմած թշուառութեան առաջն առնելու համար։

—

ՇՈՒԼԱՎԷՐԻՑ մեզ գրում են, որ այնտեղի ուսումնարանների քննութիւնները արդէն վերջացան. քննութիւններից յետոյ օրիորդաց ուսումնարանում աշակերտների ձեռագործների վիճակաթաղ կար, որ կարելի է ասել բաւական աջող անցաւ։

—

Մեզ գրում են ՇՈՒԼԱՎԷՐԻՑ, որ յունիսի սկզբներից սկսվել է հունձը, որ աջող չէ կարելի ասել, քանի որ հասկերից շատերը փչացել են, որ, գիւղացիների ասելով, առաջ է եկել անձրևների շատութիւնից։ Իսկ այդ հներում խաղողների վրա սկսել է երևալ ‹թոզ› կոչված հիւանդութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՑ ԾԱՆՈՒՑԱԳԻՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

—

‹Levant-Herald› լրագիրը իւր երէկի թւով կը հրատարակէ բովանդակութիւնն այն ծանուցագրոյն, զոր, ինչպէս արդէն ծանուցինք, ռուսական դեսպան պ. Նելիտոֆ վերջին օրերս ուղղեց առ Բ. Դուռն ի մասին թուրք և ռուսական պատերազմի տուգանաց։ Աւասիկ այդ բովանդակութիւնը. «1882-ին ռուսական դեսպանատան և Բ. Դրան միջև գոյացեալ համաձայնութեամբ թուրքիա յանձն առած էր ինչ ինչ եկամուտներ ցոյց տալ պատերազմական տուգանքը տարեվճարով հատուցանելու համար, և եթէ այդ եկամուտը անբաւական գային, Բ. Դուռն յանձն առած էր որոշեալ գումարն ամբողջացնել եկամուտի ուրիշ աղբիւրներ ալ ցոյց տալով։ Արդ, կամ այն է որ այդ եկամուտը ենթադրուած գումարին չեն հասած և կամ այն է որ օսմ. իշխանութիւնք ըստ կամս վատնած են այդ գումարի

աշխարհաբարը գրաբարի ծնունդն է։ Ինչի համար, ուրեմն, աշխատենք որ գրաբարը իր ազդեցութիւնն ունենայ աշխարհաբարի վրա,—երևի որպէս զի աշխարհաբարը մշակելու ժամանակ փոխ առնենք գրաբարից և մտցնենք աշխարհաբարի մէջ գրաբարի լեզուական կօնստրուկցիան։ Բայց լատիներէնի կօնստրուկցիան մտցնել կենդանի իտալերէնի մէջ, հին յունարէնի կօնստրուկցիան մտցնել նոր կենդանի յունարէնի մէջ, հին հայերէնի կօնստրուկցիան մտցնել նոր կենդանի հայերէնի մէջ,— նշանակում է հին լեզուական անկենդան, մեռած կօնստրուկցիայով՝ սպանել, անկենդանացնել նոր լեզուի կենդանի լեզուական կօնստրուկցիան։

Կենդանացնել մի մեռած, թէկուզ կատարեալ ձևեր ունեցող լեզու այժմեան տասն և ինսներորդ դարում ապրող մի կենդանի ժողովրդի մէջ, ասում է ուսումնական Այտընեան վարդապետը, նոյնքան անհնարին է, որքան անհնարին է հին դարերը տեղափոխել և կենդանացնել այժմեան ժամանակի մէջ։

Միակ բան, որ կարող ենք և պէտք է փոխ առնենք գրաբարից,—այդ նրա հարուստ բառերի պաշարն է, քանի որ նրա բառերը ընդհանուր հայկական են և այդ բառերի արմատը նոյնքան գրաբարին է պատկանում, որքան գաւառական լեզուներին ու նոր գրական լեզուին։ Դրանք հայկական լեզուի ընդհանուր սեփականութիւն են։

Բացի սրանից մենք պէտք է սովորենք գրաբարը դրա համար, որ օգտվենք նրանից աշխարհաբարը մշակելիս բարդ բառեր կազմելու ժամանակ, քանի որ գրաբարը այդ կողմից մեզ ուղեցոյց կարող է լինել։ Մենք ասեցինք որ Աբովեան և նրա հետևողները մեզ միայն հում նիւթ մատակարարեցին երևանեան ժողովրդական բարբառից, որը և ծառայել է որպէս հիմք մեր նոր գրական լեզուի կազմակերպութեան համար։ Բայց նոր գրական լեզուի մշակողն ու ստեղծողը Աբովեանց իր դպրոցով չէ եղել, այլ այդ լեզուի առաջին մշակողն ու ստեղծողը եղել է Ստեփաննոս Նազարեանց, իր դպրոցով։

Երբ որ մէկը գործ է ածում ‹լեզու ստեղծել› բառը, այդ չէ նշանակում որ լեզուն կարելի լինէր ստեղծել ոչնչից։ Միայն կատարեալ իդիոտներ կարող են իրանց իբր թէ ծանր, իբր թէ ուսումնական յօդուածում այնպիսի անտեղի և անմիտ հանաք անել որ՝ լեզու նոյնչափ չէ կարելի ստեղծել ոչնչից, ինչպէս չէ կարելի աշխարհ գալ առանց հօրն ու մօրը....

Նրանք որոնք անընդունակ են իրանց սեփական գլխով մտածելու, այլ մտածում են միշտ ուրիշի խելքով, պարզ է որ չեն էլ կարող երևակայել որ աշխարհիս երեսին մի որ և է բան կարելի լինէր ստեղծել, քանի որ իրանք անընդունակ են որ և է ստեղծագործութեան, այլ ընդունակ են միայն ‹թուլթակութեան։›

զափարներ արտայայտելու համար, ընդհանրութեան համար մատչելի և գործածելի նոր լեզու ստեղծելու համար՝ կրկին մշակվում է մի նոր ազգային լեզու, կրկին իր ծնունդն առնելով այն անսպառելի և միշտ կենդանի աղբիւրից, ժողովրդից և այն էլ շատ անգամ նրա ամենաընտիր ժողովրդական բարբառների մէջից։ Այդպէս իտալական լեզուն, որը թէև, ի հարկէ, ընդհանուր լատինական արմատ ունի, մշակվել է գլխաւորապէս իտալական երկու ժողովրդական բարբառներից՝ Տօսկանայի և Սիցիլիայի բարբառներից։ Իսկ հայոց այժմեան աշխարհաբար լեզուն իր ծագմամբ ու գոյութեամբ գլխաւորապէս պարտական է Երևանի ժողովրդական բարբառին։ Երևանի (Արարատեան) բարբառի առաջին արձանագրողը Խաչատուր Աբովեանն էր։ Նրան հետևեցին ուրիշները։

Բայց սրանք մեր նոր գրական (աշխարհաբար) լեզուի մշակողներ կամ ստեղծողներ չեն կարող համարվել. Աբովեան և նրա վիպական գրական ձևի հետևողները միմիայն նոյնութեամբ և հաւատարմութեամբ արձանագրեցին, եթէ այդպէս կարելի է ասել լուսանկարեցին երևանեան բարբառը, այնպէս ինչպէս նա կայ, իր թուրքաց ասացուածներով և բառերով հանդերձ։ Նրանք մեզ տուեցին միմիայն հումնիւթ, ծանօթացրին մեզ Արարատեան ժողովրդական բարբառի լեզուական կազմակերպութեան և չինութեան

(կօնստրուկցիայի) հետ, աւելի ոչինչ։

Փոքր առ փոքր երևանեան բարբառը սկսեց դառնալ մեր նոր գրական լեզու։ Այդ բարբառից կազմակերպվեց այն լեզուն, որով մենք գրում, խօսում ենք, որով մենք դաս ենք տալիս մեր դպրոցներում, որով մենք մեր գրքերը և լրագիրներն ենք հրատարակում։

Այդ լեզուի հիմնական չինութիւնը, կօնստրուկցիան կատարելապէս տարբերվում է մեր կլասիական գրաբարից։ Իսկ մի լեզու տարբերվում է միւսից ոչ այնքան բառերով, որքան կօնստրուկցիայով. դա է կազմում մի լեզուի կերպարանքը, նրա ոգին, նրա առանձնայատկութիւնը։ Խոնարհումներին և հոլովների սակաւութիւնը ու նրանց տարբերութիւնը զրաբարից, նախդիրների բացակայութիւնը, կամ նախդրի գոյականի վերջը դրվելը, ածականի յոգնակի ձև չընդունելը գոյականի յոգնակի եղած ժամանակ, ածականի գոյականից առաջ դրվելը և այլն և այլն, այդ բոլորը, որի մանրամասնութիւնների մէջ մտնելը աւելորդ է այստեղ, այդ բոլորը և կազմում է լեզուի չինութեան այն տարբերութիւնը, որի պատճառով հնարաւոր չէ հաշտութեան նշոյլն անգամ հին գրաբարի և նոր աշխարհաբարի մէջ։

Իսկ անգիր առած ֆրազներ անդիտակցաբար կրկնողներն ասում են մեզ թէ՝ աշխարհաբարը մշակելու համար անհրաժեշտ է գրաբարն իմանալ, հաստատ մնալով այն մոլութեան մէջ, թէ

Բացի սրանից մենք պէտք է սովորենք գրաբարը դրա համար, որ օգտվենք նրանից աշխարհաբարը մշակելիս բարդ բառեր կազմելու ժամանակ, քանի որ գրաբարը այդ կողմից մեզ ուղեցոյց կարող է լինել։ Մենք ասեցինք որ Աբովեան և նրա հետևողները մեզ միայն հում նիւթ մատակարարեցին երևանեան ժողովրդական բարբառից, որը և ծառայել է որպէս հիմք մեր նոր գրական լեզուի կազմակերպութեան համար։ Բայց նոր գրական լեզուի մշակողն ու ստեղծողը Աբովեանց իր դպրոցով չէ եղել, այլ այդ լեզուի առաջին մշակողն ու ստեղծողը եղել է Ստեփաննոս Նազարեանց, իր դպրոցով։

Երբ որ մէկը գործ է ածում ‹լեզու ստեղծել› բառը, այդ չէ նշանակում որ լեզուն կարելի լինէր ստեղծել ոչնչից։ Միայն կատարեալ իդիոտներ կարող են իրանց իբր թէ ծանր, իբր թէ ուսումնական յօդուածում այնպիսի անտեղի և անմիտ հանաք անել որ՝ լեզու նոյնչափ չէ կարելի ստեղծել ոչնչից, ինչպէս չէ կարելի աշխարհ գալ առանց հօրն ու մօրը....

Նրանք որոնք անընդունակ են իրանց սեփական գլխով մտածելու, այլ մտածում են միշտ ուրիշի խելքով, պարզ է որ չեն էլ կարող երևակայել որ աշխարհիս երեսին մի որ և է բան կարելի լինէր ստեղծել, քանի որ իրանք անընդունակ են որ և է ստեղծագործութեան, այլ ընդունակ են միայն ‹թուլթակութեան։›

մէկ մասն, որոշեալ տարեվճարը կանոնաւորապէս չը վճարուեցան երբէք և դիզեալ պահանջից գումարը կը հասնի շուրջ 650,000 օսմ. ոսկւոյ։ Այս իրողութենէն կը հետևի որ 1882-ին գոյացեալ համաձայնութիւնն ինքնին չեղեալ է, ըստ որում Բ. Դուռը չը գործադրեր զայն, հետևաբար—կըսէ դեսպանն—իմ կառավարութիւնս կը հարցնէ թէ ինչ միջոցներ կառաջարկեմ սոյն վճարումն ստանալու համար։ Ռուսիոյ թողեալ եկամտից վրայ անմիջական հսկողութիւնն մը ի գործ դնելու ծայրայեղ պահանջումն ընելէ առաջ, պ. Նելիդոֆ կը խնդրէ Բ. Դռնէն, որ ցոյց տայ իրեն թէ ինչ միջոցներ ձեռք առնուլ մտադիր է գործադրելու համար իւր խոստումներն հանդէպ Ռուսիոյ. և ըստ որում պ. Նելիդոֆ իմացած է թէ Բ. Դուռը փոխառութիւն մը կնքելու վրայ է և իւր աղատ եկամուտներն անոր կը յատկացնէ, ինք պարտք կը համարի այժմէն ծանուցանել օսմ. կառավարութեան թէ իրաւունք չունի այս բանն ընել առանց կանխաւ երաշխաւորելու պատերազմական տուգանաց վճարումն, վասն զի ըստ Պերլինի դաշնագրոյն, օտար արժէտեարց պահանջմունք միայն պատերազմական տուգանքէն առաջ կանցնին։ Հետևաբար պ. Նելիդոֆ կը հրաւիրէ զԲ. Դուռն ըստ կարելւոյն փութով գոհացուցիչ պատասխան մը տալ իրեն, որպէս զի Ռուսիա չը հարկադրի ի հրապարակ հանել իւր այս ձեռնարկն, որ կընայ ելմտական ծանր դժուարութիւններ պատճառել Բ. Դրան։

Կը յիշուի թէ 1887-ին ռուսական դեսպանն առաջին ծանուցագիր մը տուած էր մի և նոյն խնդրոյն վրայ։

(Արևելք)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական «Daily Chronicle» լրագիրը հաղորդում է, որ Նուբար-փաշան կանչված է Կ. Պոլիս։ Նրա գալը, լրագրի ասելով, կապ ունի թէ եգիպտական հարցի հետ և թէ Հայաստանի մէջ մտցնելի վարչական վերանորոգութիւնների հետ։ Լրագիրը աւելացնում է որ հաւանական է թէ Նուբար-փաշան ձեռք բերելու է Հայաստանի կառավարչի պաշտօնը։

—Ֆրանսիական պատգամաւորների ժողովը ընդունեց 385 ձայներով ընդդէմ 69-ի պատգամաւոր Մակսիմ Լէկօնտի առաջարկած օրինագծի անցեալագելիութիւնը, որով իրաքանչիւր սենատոր կամ պատգամաւոր, որը առանց յարգելի պատճառների չի մասնակցի նիստերին, կորցնում է իր սենատորական և պատգամաւորական լիազորութիւնները։

—Եւրոպական լրագիրները հաղորդում են, որ Ֆրէյբուրգում, մի Ֆրանսիացուն և նրա կնոջը երկաթուղու կայարանում վիրաւորելու պատճառով, Ֆրանսիացի տաս ուսանողներ Հասսօ կօրպօրացիայից մենամարտի հրաւիրեցին Բօրուսիա կօրպօրացիային պատկանող ուսանողներին։ Մենամարտը պէտք է կայանայ մի չէզոք հողի վրա։

Լրագիրները պահանջում են, որ արգելվի այդ մենամարտը։

—Որպէս յայտնի է մեր ընթերցողներին, նորերում Կ. Պոլսի ռուսաց դեսպան Նելիդով մի յայտագիր ներկայացրեց, որով պահանջում էր Թիւրքիայից պատերազմական կօնտրիբուցիայի վճարումը։ Սուլթանը առանձին իրադէպով հրամայեց գոհացնել ռուսաց կառավարութիւնը։ Թիւրքաց կառավարութիւնը պէտք է այս տարի վճարէ Ռուսաստանին մօտաւորապէս մէկ միլիոն ֆունտ ստէրլինգ ահագին դումարը։

—Լօնդոնի «Daily News» լրագրին Կ. Պոլսից հաղորդում են, որ Բ. Դուռը համաձայնվեց ապահովել պատերազմական կօնտրիբուցիան Էրզրումի վիլայէթից ստացված հարկերով։ Թիւրքաց կառավարական շրջաններում կարծում են, որ Ռուսաստանը գոհ կը մնայ այդ ապահովութիւնով։

—Բէլգրադում լուր է տարածվել, որ Սերբիայի Միլան թագաւորը դիտաւորութիւն ունի բաժանվել իր կնոջից, Նատալիա թագուհուց և ապահարզան ստանալ։ Այդ առիթով շատ հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում «Expresse Orient» լրագիրը։ Նորերումս Միլան թագաւորը կանչեց Բէլգրադ բոլոր միտրոպոլիտներին, որոնք ստացված հրահանգների համաձայն, մայրաքաղաք եկան և համարեա գաղտնի ժողով կազմեցին, Բէլգրադի միտրոպոլիտի նախագահութեամբ։ Ժողովը, լսելով թագաւորի լիազօրի հաղորդութիւնը ապահարզանի մասին, միաձայն յայտնեց, որ ինքն իրաւունք չունի ապահարզան տալ, որովհետև ապահարզանին վերաբերեալ բոլոր գործերը սինոդի իրաւասութեան տակն են գտնվում։ Այդ բանին Միլան թագաւորի լիազօրը պատասխանեց, որ թագաւորը մասնաւոր անձն չէ, և որ նրա համար պէտք է բացառութիւն անել։ Սակայն ժողովը լիազօրի այդպիսի պատճառաբանութիւնները անհիմն գտաւ և կրկին անգամ յայտնեց, որ միայն սինոդն ունի իրաւունք վճռել ապահարզանին վերաբերեալ գործերը։

—«National Zeitung» լրագիրը հաղորդում է, որ Վիլհելմ II կայսրը կը թագադրվի Պրուսիայի թագաւոր ներկայ աշնանը Կէօնիգսբէրգում։ Իտալական լրագիրների խօսքերով Հումբերտ թագաւորը անձամբ Բերլին կը գայ կայսրի թագադրութեանը ներկայ լինելու համար։

—«Արևելք» լրագրում կարդում ենք հետևեալը։ «Ըստ յանձնարարութեան ամեն. ս. պատրիարքը հօր և ըստ հրաւէրի Բէրայի թաղական խորհրդոյն, դեր. Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց առաժամանակ Բէրա հաստատվեց, ուր պիտի վարէ Ս. Երրորդութեան եկեղեցւոյ քարոզչութեան պաշտօնը, ցորչափ մնայ անդ։»

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բերլինում հրատարակվող «Echo» գերմաներէն շաբաթաթերթի վերջին, 303-որդ համարը ամբողջապէս նուիրված է հանգուցեալ Ֆրիդրիխ III կայսրի յիշատակին։ Նրա մէջ տպված են հանգուցեալի հիւանդութեան մասին վերջին բիւլլետէնները, մինիստրութեան աղդարարութիւնը կայսրի մահվան մասին, կայսրի կենսագրութիւնը, գրված Հուգօ Հէրօլդից, հանգուցեալի չորս պատկերներ՝ երիտասարդ ժամանակ, հասակ առած ժամանակ, պատերազմի միջոցին, և նրա վերջին պատկերը։ Նոյնպէս նրա պատկերը մահվան անկողնու վրա։ Այնուհետև համարը պարունակում է իր մէջ մի ուսանելի կայսրի յիշատակին նուիրված և բազմաթիւ քաղուածներ այլ և այլ թէ գերմանական և թէ օտար լրագիրներից՝ հանգուցեալի մասին արտայայտած զդացմունքների վերաբերմամբ։ Համարին կցված են և բազմաթիւ ցաւակցական հեռագիրներ, որոնք ստացված են աշխարհիս երեսին ապրող գերմանացիներից։ «Echo»-ի այդ համարի երկրորդ կէսը պարունակում է նոր կայսերական զոյգի պատկերները և նրանց մասին յօդուածներ։ «Echo»-ի այդ համարը թէ Գերմանիայում և թէ Գերմանիայից դուրս ապրող բոլոր գերմանացիների հետաքրքրութիւնը առանձնապէս պիտի շարժէ, անշուշտ։ Համարը ձեռք բերելու ցանկացողները կարող են դիմել Բերլին՝ andie Expedition des «Echo» և կը ստանան այդ համարը անվարձ։

* * *

